



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

19 մայիսի 2020 թվականի թիվ 37-Ա

ք. Երևան

«ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով 2020 թվականի ապրիլի 10-ին «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Ընկերության գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա («Արմնյուզ» հեռուստաձրագրի կողմից հեռարձակված «Հայելու առաջ» հաղորդման ընթացքում արձանագրվել են արտահայտություններ, որոնք համապատասխանում են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներին) 2020 թվականի ապրիլի 09-ին կազմված իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը:

Հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավական ապահովման բաժնի կողմից ուսումնասիրվել է 2020 թվականի ապրիլի 10-ին հարուցված թիվ 3 վարչական վարույթի նյութերը, որի արդյունքում պարզվել է հետևյալը.

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության ծրագրերի մոնիտորինգի բաժնի ավագ մշտադիտարկողի կողմից իրականացված Ընկերության գործունեության մշտադիտարկման արդյունքում 2020 թվականի ապրիլի 09-ին կազմվել է արձանագրություն՝ Ընկերության կողմից («Արմնյուզ» հեռուստաձրագրի սույն թվականի ապրիլի 06-ի եթերում ժամը 22:08-ից 22:56-ը ընկած ժամանակահատված) «Հայելու առաջ» հաղորդման հեռարձակման ընթացքում հնչել են արտահայտություններ, որոնք համապատասխանում են Հանձնաժողովի 2019թ-ի օգոստոսի 14-ի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հեռուստառադիոհաղորդումների (ֆիլմերի), այլ տեսաձայնաշարային

նյութերի որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 90-Ա որոշման հավելվածի 2-րդ մասի հատկանիշներին, որը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն կարող է եթեր հեռարձակվել ժամը 24.00-6.00-ն ընկած ժամանակահատվածում:

Նշված արարքը համապատասխանում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 15-րդ մասի հատկանիշներին:

Հանձնաժողովը 2020 թվականի ապրիլի 10-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Ընկերությանը և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հանձնաժողով ներկայացրած գրավոր դիմումում Ընկերությունը խնդրել է պարզաբանել, թե «Հայելու առաջ» Անժելա Թովմասյանի հեղինակային հաղորդման հեռարձակման ընթացքում, որ արտահայտությունը կամ արտահայտություններն են գնահատվել որպես վերոնշյալ նորմի խախտում և Հանձնաժողովի պատասխանից հետո, որ իրավախախտումը վերաբերվում է հաղորդմանն ամբողջությամբ, այլ հարցադրումներ, պարզաբանումներ և բացատրություններ չեն ներկայացվել Հանձնաժողով: Վարչական վարույթի քննարկման նիստի ընթացքում Ընկերության ներկայացուցիչը ներկայացրել է «ԱՐՄՆՅՈՒԶ» հեռուստաընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ» իրենց դիրքորոշումը, որտեղ նշված է, որ Ընկերության համար անհասկանալի է, թե հաղորդումը ամբողջությամբ ինչպես կարող է որակվել որպես իրավախախտում, առանց գնահատման առարկա դարձնելու դրա բովանդակությունը և որոշելու թե կոնկրետ որ արտահայտությունն է համապատասխանում Հանձնաժողովի թիվ 90-Ա որոշման 2-րդ կետով սահմանված որևէ հատկանիշի: Դիրքորոշման մեջ նշված է նաև, որ Հանձնաժողովի, թե՛ 13.04.2020թ-ի թիվ 05-239 գրությամբ, թե՛ դրան կից ներկայացված իրավախախտման վերաբերյալ արձանագրության և թե՛ 27.04.2020թ-ի թիվ 05-267 գրությամբ չի ներկայացվել որևէ իրավական կամ փաստական հիմք, որ Անժելա Թովմասյանի «Հայելու առաջ» հեղինակային հաղորդման ընթացքում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի և Հանձնաժողովի թիվ 90-Ա որոշման որևէ պահանջի խախտում թույլ տալու վերաբերյալ, ինչից ելնելով իրենք գրկված են բովանդակային տեսանկյունից այդ կապակցությամբ դիրքորոշում հայտնելու հնարավորությունից:

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռքբերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում ամրագրում ենք հետևյալը.

Ընկերության կողմից 2020 թվականի ապրիլի 06-ին հեռարձակված «Հայելու առաջ» հաղորդման հյուրերն էին «Երևանի այլընտրանք քաղաքապետարան նախաձեռնության» ղեկավար Սոնա Աղեկյանը և «Առողջ հանրություն» հասարակական կազմակերպության ղեկավար Մարինե Խաչատրյանը:

Վերը նշված հաղորդման հյուրերը քաղաքական ուժերի, այդ ուժերի ներկայացուցիչների, Հայաստանի Հանրապետության նախագահի, վարչապետի,

քաղաքապետի, պատգամավորների, դատավորի հասցեին հնչեցնում էին իրենց կարծիքներն ու տալիս գնահատականներ, օրինակ.

«նման խեղկատակները երկրի դեկին չպետք է լինեն», «հաջորդ անգամ լայվ մտնելիս կարող ես փոռիկով յուրկա հագնել», «թերուս և դասալիք դեկավար», «դասալիք Նիկոլը թուրքերին ինֆորմացիա է տալիս...», «լակոտակրատյաններ», «սադիստ օրիորդ դատավոր», «ազգի դավաճան», և այլն: Հաղորդումը լի էր փաստերի բազմաթիվ խեղաթյուրումներով, բացահայտ կեղծիքներով, սպառնալիքներով, բռնության կոչերով, խուճապ առաջացնող ենթադրություններով, որոնց անվերջ կրկնությունները շուրջ 40 րոպե տևած հաղորդման ընթացքում առաջացնում են հատկապես անչափահաս հեռուստադիտողի մոտ տագնապի, անելանելիության զգացում:

Հանձնաժողովը հավատարիմ է խոսքի ազատության սկզբունքներին, սակայն լիցենզավորված լրատվամիջոցների համար խիստ կարևորություն և առաջնահերթություն է ճգնաժամային իրավիճակներում հանրությանը և հատկապես անչափահասներին, որոնց մոտ դեռ ձևավորված չի քննադատական մտածողությունը, ստուգված փաստերի և իրադարձությունների մասին օբյեկտիվ, ստուգված փաստերի վրա հիմնված իրազեկումը:

Նշված հաղորդման վերջում հյուր Մարինե Խաչատրյանը հանդես է գալիս հետևյալ հայտարարությամբ՝ «մենք հասկանում ենք, որ կորոնավիրուսը համաշխարհային ֆեյթ է, և այն երկար չի տևելու և Նիկոլը ձեռնարկելու է հաջորդ քայլերը մեր հանրությանը պահելով ահ ու սարսափի մեջ... և այստեղ ես ահագանգ եմ հնչեցնում, և նախազգուշացնում եմ անձամբ Նիկոլին: Միրելի հայրենակիցներ մեր հայրենիքը հիմա վերցնում են շրջափակման մեջ, ազգի դավաճան դասալիք Նիկոլը թուրքերին ինֆորմացիա է տալիս, թե մենք ինչ սննդային պաշարներ ունենք.....: Նիկոլ, դու հանկարծ չհամաձակվես որևէ տեռակտ իրականացնես իմ երկրում, էս կարանտինից հետո որևէ տեռորիստական գրոհ եղավ իմ երկրի վրա, ապա բոլորը արդեն կիմանան որ դա դու ես կազմակերպել զգուշացնում եմ, աչքերդ կհանեն, պարոն Նիկոլ, եթե դու հանկարծ համարձակվես էս կարանտինից հետո տեռորիստական գրոհ իրականացնես իմ հայրենակիցների վրա»:

Վերը նշված մեջբերումները փաստում են այն հանգամանքը, որ տվյալ հաղորդման ընթացքում հնչում են բռնի գործողությունների խրախուսում, գոեհկաբանություն և հայհոյախոսություն, ինչը նշանակում է, որ տվյալ հաղորդումը չի կարող ցուցադրվել երեխաների համար նախատեսված ժամերին, ինչը Օրենքում հստակ նշված է և դրա պահպանումը չի կարող ազդել խոսքի ազատության իրավունքի իրականացման վրա:

Հանձնաժողովը կարևորում է այն հանգամանքը, որ հաղորդումն ուղիղ եթերով չէր հեռարձակվում, նախորոք տեսագրված էր, և հաղորդման հեղինակները տեխնիկական և ժամանակային հնարավորություններ ունեին հանել հաղորդումից այն դրվագները, որոնք խախտում են Օրենքի պահանջները: Որոշումն ընդունելիս, Հանձնաժողովը հաշվի է առել նաև հետևյալը՝ «Արմյուզ» հեռուստաձրագրի եթերում

հեռարձակված հաղորդման ձայնաշարի մեկ օր հետո կրկնությունը «Արմնյուզ ՖՄ» ռադիոծրագրի եթերում բացառում է խմբագրակազմի անփութությունը և այս դրվագով փաստում է նշված երկու հեռարձակողների կանխամտածված խմբագրական քաղաքականության մասին:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ՝ «հեռուստառադիոհաղորդումների չարաշահման անթույլատրելիությունը» հոդվածով սահմանվել են այն դրույթները, որոնք արգելվում են հեռուստառադիոհաղորդումների ընթացքում օգտագործել, սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ և 6-րդ կետերը սահմանում են.

«1. Արգելվում է հեռուստառադիոհաղորդումներն օգտագործել՝

4) քրեորեն պատժելի կամ գործող օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելու,

6) բռնության և դաժանության պաշտամունք պարունակող կամ քարոզող հաղորդումներ հեռարձակելու նպատակներով:»

Հանձնաժողովն երաշխավորելով հեռուստառադիոհաղորդումների ազատ ընտրության, արտադրության ու տարածման իրավունքը, աջակցելով քաղաքացիական հասարակության ձևավորմանը՝ կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի, տեղեկատվության ազատության և բազմակարծության ապահովման միջոցով, միաժամանակ իրականացնելով իր վերահսկողական գործառույթը փաստում է, որ հեռուստաընկերությունը պարտավոր է անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները ցուցադրել ժամը 24.00-ից հետո մինչև ժամը 6.00-ը, որպեսզի դա չազդի անչափահասների ֆիզիկական և բարոյական դաստիարակության վրա, միջոցներ է ձեռնարկում վնասակար բովանդակությամբ նյութերի հեռարձակումից երեխաներին պաշտպանելու համար:

Առկա են բազմաթիվ հետազոտություններ, որոնք փաստում են, որ մեղիայում առկա գոեհկարբանությունն ու հայհոյախոսությունն ազդում են հասարակության, հատկապես անչափահասների տրամադրության, սպասումների և առհասարակ կերպի վրա, այնուամենայնիվ հեռուստառադիոընկերություններում շարունակվում են հայտնվել այդպիսի հաղորդումներ: Ուստի անհրաժեշտ է մշակել և գործարկել մեխանիզմներ՝ ժամանակակից աշխարհի հաճախ անվերահսկելի տեղեկատվական հոսքերի պայմաններում երեխաներին հակաբարոյական, նրանց լիարժեք ու ներդաշնակ զարգացմանը սպառնացող տեղեկատվության տարածումից հնարավորին զերծ պահելու համար:

Հարկ է նշել, որ միջազգային պրակտիկայում ևս անդրադարձ կա հանրային բարոյականության և, մասնավորապես, անչափահասների բարոյական դաստիարակության և այդ հարցերում պետության դերին՝ իրավաչափ համարելով կարգավորող մարմնի միջամտությունը խոսքի ազատությանը՝ ի շահ հանրային բարոյականության և, մասնավորապես, անչափահասների բարոյական և բնականոն զարգացման պաշտպանության:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի (ՄԱԿ, 1989թ.) 19-րդ հոդվածը երաշխավորում է երեխաների պաշտպանությունը հոգևոր բռնություններից ու չարաշահումներից: Երեխայի պաշտպանության ապահովումը համարվում է պետության հիմնական պարտականություններից մեկը:

Կոնվենցիոն դրույթներն արտացոլված են «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում:

Միջազգային իրավական բազմաթիվ այլ ակտերով ևս ամրագրված են երեխաների իրավունքների պաշտպանության սկզբունքները և չափորոշիչները: Եվրոպայի խորուրդը մշակել է երեխաներին բռնությունից պաշտպանելու միասնական ազգային ռազմավարությունների Եվրոպայի խորհրդի քաղաքականության ուղենիշները և 2009 թվականի նոյեմբերին Եվրոպայի խորհրդի 47 անդամ երկրները ներկայացնող Նախարարների կոմիտեն ընդունել է ուղենիշները պարունակող հանձնարարական: Մասնավորապես Հանձնարարականում նշված է՝ «պետությունը առաջնային պատասխանատվություն է կրում երեխաներին լրատվական վնասակար բովանդակությունից պաշտպանելու համար: Բռնության պատկերման և երեխաների համար հնարավոր վնասակարություն պարունակող բովանդակության տարածման առնչությամբ՝ լրատվամիջոցների համար պատասխանատուները պետք է լիովին ընդունեն իրենց պարտականություններն ու պատասխանատվությունները՝ թե ինչին կարող է հանգեցնել իրենց արտահայտման ազատության կիրառումը»:

Հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 14-ի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հեռուստառադիոհաղորդումների (ֆիլմերի), այլ տեսաձայնաշարային նյութերի որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 90-Ա որոշման 2-րդ մասը սահմանում է.

Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող են համարվում այն հեռուստառադիոհաղորդումները (ֆիլմերը), այլ տեսաձայնաշարային նյութերը, որոնք՝

բ) ցուցադրում են բռնություն (հոգեբանական, ֆիզիկական, սեռական և այլն) պարունակող կադրեր (նվազագույնը՝ առանց դատապարտելու բռնությունը) կամ

խրախուսում են բռնի գործողությունները մարդկանց կամ կենդանիների հանդեպ,

ի) պարունակում են գոեհկարանություն և հայիոյախուսություն:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների կրկնակի դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին Հանձնաժողովին գրավոր տեղեկացնելու դեպքում

Հանձնաժողովն իր որոշմամբ իրավասու է կիրառելու գրավոր նախազգուշացում կամ տուգանք:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 15-րդ մասը սահմանում է.

«Էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների եթեր հեռարձակումը ժամը 24.00-ից մինչև 6.00-ն ընկած ժամանակահատվածից դուրս, բացառությամբ բաժանորդային հեռարձակման՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով»:

19.05.2020թ-ին կայանալիք նիստի մասին Ընկերությանը պատշաճ ծանուցվել է:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով իրավախախտման կատարման փաստը և ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 14-ի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հեռուստառադիոհաղորդումների (ֆիլմերի), այլ տեսաձայնաշարային նյութերի որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 90-Ա որոշմամբ, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով և 60-րդ հոդվածի 15-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՋՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

19 մայիսի 2020թ.

ք. Երևան